ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
հասցե՝ք.Երևան, Նալբանդյան5, սենյակ 22ա, հեռախոս՝ (+37493)515-600,(+37491)515-600
էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com
ՀԻՄՆԱԴՐԱՄ
Իրավունքի զարգացման և պաշտպանության

ՀՀ Լոռու մարզպետարան
Հասցե՝ ք.Վանաձոր, Հայքի հրապարակ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի տնօրեն՝
Գենյա Պետրոսյանից
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 5, 22ա սենյակ

28.08.2019թ.

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝

Խնդրում եմ

1. Տրամադրել տեղեկատվություն՝ 2000 թվականից մինչ այսօր ՀՀ դատական ատյաններում քննված, ինչպես նաև դեռևս քննության փուլում գտնվող դատական գործերի վերաբերյալ՝ Լոռու մարզպետարանի կողմից տեղեկատվության չտրամադրման, սխալ/կեղծ տեղեկատվության տրման, թերի/ոչ լիարժեք տեղեկատվության տրման, տեղեկատվության տրամադրման ժամկետների խախտման, տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու ազատության այլ սահմանափակումների կիրառման վերաբերյալ գործերով՝ նշելով համապատասխան դատական գործերի համարները:
2. Տրամադրել Լոռու մարզպետարանի կողմից հաստատված գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի պատճենը:
3. Հայտնել 2000 թ. մինչ օրս արդյոք գործող գաղտնագրման ենթակա գերատեսչական ցանկերում կատարվել են փոփոխություններ՝ ցանկերում ընդգրկված տեղեկությունների հիմնավորվածությունը վերանայելու արդյունքում:
4. Հայտնել արդյոք մինչև օրենքով սահմանված պահպանման ժամկետի լրանալը երբևէ գաղտնազերծվել են պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ՝ օբյեկտիվ հանգամանքների փոփոխության հիմքով:
5. Հայտնել արդյոք 2000թ. մինչ օրս արձանագրվել է գաղտնագրված տեղեկությունների պահպանության հաստատված ժամկետների կրճատում:
6. Հայտնել Մարզպետարանում վերջին անգամ փաստաթղթերի գաղտնազերծման տարեթիվը:

Հարգանքով՝

Գ. Պետրոսյան